

**Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**ՀՀ Սյունիքի մարզի և Բելառուսի Հանրապետության Մինսկի մարզի  
հետ համագործակցության վերաբերյալ /առ 01.06.2014թ./**

Հ/Հ	Կնքված համաձայնագիր	Տարեթիվ	Ընթացիկ վիճակ
1	Կապան-Բորիսով (Բելոռուս) քաղաքների համագործակցություն	Հուլիսի 9-ին 2008թ. դեկտեմբերի 9-ին	Առկա է փոխադարձ համագործակցության համաձայնագիրը: Գործընթացը շարունակվում է ներկայացված ծրագրերի իրականացման ուղղությամբ:
2	Գորիս և Մինսկի մարզի Նեսվիժ (Բելոռուս) քաղաքների համագործակցություն	Հուլիսի 12-ին 2008թ. դեկտեմբերի 12-ին	Գորիսի պատվիրակությունը այցելել է Նեսվիժ՝ 14.08.2008թ. և 15.01-16. 01.2010թ. 29.09.2012թ-ին Նեսվիժ քաղաքի պատվիրակությունը մասնակցեց Գորիսյան օրեր մշակութային միջոցառմանը, Սուրբ Աստվածածին եկեղեցու բացման արարողությանը: 2013թ.հուլիսի 2-ին Գորիս քաղաքի պատվիրակությունը այցելեց Նեսվիժ, իսկ սեպտեմբերի 29-ին փոխադարձ այցով Նեսվիժի պատվիրակությունը մասնակցեց Գորիսյան օրեր մշակութային միջոցառմանը:
3	Միսիան և Մինսկի մարզի Սլուցկ (Բելոռուս) քաղաքների համագործակցություն	Հուլիսի 12-ին 2008թ. դեկտեմբերի 12-ին	2008թ-ին կատարվել են ՀՀ Սյունիքի մարզի և Բելոռուսի Հանրապետության Մինսկի մարզի պատվիրակությունների պաշտոնական փոխայցելություններ:
4	Մեդրի և Մինսկի մարզի Մյադել (Բելոռուս) քաղաքների համագործակցություն	Հուլիսի 9-ին 2008թ. դեկտեմբերի 9-ին	Նախատեսվում է համագործակցել արտաքին, տնտեսական, հումանիտար, կուլտուրայի, կրթության, սպորտի, տուրիզմի ինքնակառավարման բնագավառներում: Համագործակցությունը իրականացվում է նամակագրական կապով:
5	Ագարակ և Մինսկի մարզի Սոլիգորսկ քաղաքների համագործակցություն	Հուլիսի 9-ին 2008թ. դեկտեմբերի 9-ին	Մշակույթի ոլորտում կատարվել են հորեյանական և տոնական ամսաթվերին նվիրված հանդիսություններում մասնակցելու նպատակով պատվիրակությունների փոխանակում: Սոլիգորսկ քաղաքի հիմնադրման 85-ամյակին նվիրված միջոցառմանը /26.08.2009թ-28.08.2009թ/ ներկա էր Ագարակի քաղաքի պատվիրակությունը: Ագարակ քաղաքի հիմնադրման 60-ամյակին նվիրված տոնակատարությանը /08.10.2009-10.10.2009թ/ ներկա էր Սոլիգորսկի պատվիրակությունը: 2010թ. հուլիսի 5-ին Ագարակի համայնքի ղեկավարը հրավիրվել է մասնակցելու Բելառուսիայի Հանրապետության անկախության օրվան նվիրված ընդունելությանը: 2010թ. օգոստոսի 27-ից 29-ը Բելառուսիայի Հանրապետության Սոլիգորսկ քաղաքի տոնի և հանքափորերի տոնին նվիրված հանդիսություններին

			<p>մասնակցելու նպատակով Սոլիգորսկ ժամանեց Ազարակի քաղաքապետի գլխավորած պատվիրակությունը 2010թ. հոկտեմբերի 23-ին Սոլիգորսկ քաղաքի պատվիրակությունը մասնակցել է Ազարակ քաղաքի հիմնադրման 61 ամյակին նվիրված միջոցառմանը 2011թ. օգոստոսի 25-31-ը Բելառուսիայի Հանրապետության Սոլիգորսկ քաղաքի տոնի և հանքափորերի տոնին նվիրված հանդիսություններին մասնակցելու նպատակով Սոլիգորսկ ժամանեց Ազարակի քաղաքապետի տեղակալի գլխավորած պատվիրակությունը 2011թ. հոկտեմբերի 12-19-ը Սոլիգորսկ քաղաքի պատվիրակությունը մասնակցել է Ազարակ քաղաքի հիմնադրման 62 ամյակին նվիրված միջոցառմանը:</p>
6	<p>Քաջարան և Մինսկի մարզի Ժողինո (Բելառուս) քաղաքների համագործակցություն</p>	<p>Հուլիսի 23-ին կնքվել է 2006թ. հոկտեմբերի 23-ին</p>	<p>2007թ. կատարվել է Քաջարանի պատվիրակության այցը Ժողինո 2008թ. Ժողինոյի պատվիրակության փոխադարձ այցը Քաջարան 2008թ. հունիսի 25-ին Մինսկի մարզի պատվիրակության այցի ժամանակ կարևորվեց նաև քաղաքների ձեռնարկությունների միջև համագործակցությունը: 2008թ. իրականացվեց Քաջարան քաղաքի վերաբերյալ ցուցահանդեսի բացում Ժողինոյում 2009թ. Քաջարան և Ժողինո դպրոցներում բացվել է անկյուն Քաջարան և Ժողինո քաղաքների վերաբերյալ 2009թ. Քաջարան քաղաքում բացվել է Ժողինոյի հետ բարեկամության հուշակոթող: 2013թ. սեպտեմբերի 26-ին Մինսկի մարզի Ժողինո քաղաքի պատվիրակությունը այցելեց Քաջարան և մասնակցեց քաղաքի 55-ամյակի տոնակատարությանը: Ժողինո քաղաքի կրթության, մշակույթի և սպորտի բնագավառների պատվիրակության այցելությունը հետաձգվել է անորոշ ժամանակով:</p>